

<https://doi.org/10.59982/18294359-23.14.2-mm-16>

Նարինե Գագիկի Մանուկյան

բ.գ.թ., դոցենտ

ԵՊՀ, Անգլերենի թիվ 2 ամբիոն

ՀԵՀ, Լեզուների ամբիոն

manukyannarine@ysu.am

Ամփոփագիր

Սույն հեղափոխությունը նվիրված է արտակա և ներակա իմաստների փոխկապակցվածության դիտարկմանը, արտակա կառույցների ներիմաստի տարբեր սահմանումների ուսումնասիրությանը, իմաստաբանության և գործաբանության տեսանկյունից վերջիններիս շուրջ կատարված վերլուծությունների դիտարկմանը, որոնց համակցված ներկայացումն ու լուսաբանումը զուգակցվում է նաև մեր կատարած քննության արդյունքներով և եզրահանգումներով: Անդրադարձ է կատարվում նաև ներիմաստի դիտարկմանը՝ ռճագիտական և թարգմանչական հարթակներում:

Աշխատանքը տեսական բնույթ ունի և իրենից ենթադրում է «արտակա իմաստ» և «ներիմաստ» հասկացության տեսական սահմանումների և դրանց գործնական կիրառության նրբությունների համատեղ վերլուծություն:

Արտակա կառույցների շրջանակներում ներիմաստը՝ որպես տեսանելի նշույթավորված միավոր գոյություն չունի, սակայն երկխոսության ժամանակ «հնչում է»: Մի կողմից «ներիմաստ» հասկացությունն օգտագործվում է, երբ նկատի ունենք անուղղակիորեն ասվելիք՝ հիմնական տեղեկատվությունը, մյուս կողմից՝ ներիմաստ գործընթացների մոդելները փաստում են, որ ներիմաստը միջոց է «հաղորդելու» հաղորդման ոչ ենթակա՝ հավելյալ տեղեկատվությունը:

Երկխոսությունը դիտարկելով որպես ներիմաստակիր հաղորդակցության առավել ցայտուն միջոց՝ կարևոր է ուշադրության կենտրոնում պահել անձի՝ խոսքաստեղծման և խոսքի իմաստավորման հիմքում ընկած մտադրությունները և խոսքի ընկալմանը նպաստող լեզվական և արտալեզվական միջոցները:

Կանխամտածված ներիմաստի վերլուծությունը ենթադրում է խոսակիցների խոսքային մտադրությունների ըմբռնում և վերծանում, ակնարկների, ենթատեքստերի, խոսքի տոնայնության և հնչերանգի ընկալում:

Ոչ կանխամտածված ներիմաստի շրջանակներում անդրադարձ է կատարվում երկխոսության մասնակիցների համընդհանուր գիտելիքներին տվյալ թեմայի վերաբերյալ և հակիրճ, բայց բովանդակալից խոսք արտաբերելու հմտություններին:

Հիմնաբառեր. Ներակա իմաստ, արտակա իմաստ, ենթապետքստ, կանխամտածված ներիմաստ, ոչ կանխամտածված ներիմաստ, դիտարկություն, խոսքային մտադրություն:

Ներածություն

Վերջին տարիներին «ներիմաստություն» (implicitness), «ներակա իմաստ, ներիմաստ» (implicit meaning), «ներակայված իմաստ» (implied meaning), «ներակայում» (implication) հասկացությունները լայն ուսումնասիրությունների են արժանանում: «Ներիմաստ» հասկացությանն առնչվող ուսումնասիրությունների հանդիպում ենք այնպիսի գիտություններում, ինչպիսիք են լեզվաբանությունը, հոգեբանությունը, փիլիսոփայությունը, տրամաբանությունը, գրականագիտությունը:

Լեզվաբանության մեջ ներիմաստը դիտարկվում է մի քանի տեսանկյուններից: Մի կողմից՝ այն ամբողջությամբ պատկանում է լեզվագիտության բնագավառին և ուսումնասիրվում է գործաբանության շրջանակներում [Brown & Yule], [Ochs & Schieffelin], [Ostman], [Caffi & Janney], [Gonzalez], [Kneil], [Verschueren & Ostman], մյուս կողմից՝ այն լեզվի հայեցակերպ է, որի շնորհիվ իմաստները հաղորդակցման գործընթացում տարբեր աստիճաններով իրականացվում են համատեքստում և գործաբանությանը զուգահեռ դիտարկվում է նաև իմաստաբանության շրջանակներում [Bierwisch], [Davis], [Eco], [Blakemore], [Verschueren & Ostman]: Գործաբանության սահմանումն արդեն իսկ ցույց է տալիս իմաստի ընկալման համար համատեքստի անհրաժեշտությունը, այդ է՝ «գործաբանությունը լեզվագիտության ուսումնասիրությունն է» [Levinson, 195] կամ «գործաբանությունն առնչվում է իմաստի այն բնագավառներին, որոնք չեն կանխատեսում լեզվական գիտելիքները, հետևաբար, այն ուսումնասիրում է իմաստի իմաստը» [Peccei, 1], այսինքն՝ «արտակա իմաստի իրական իմաստը», այսպիսով՝ ուսումնասիրության առարկա դարձնելով կաղապարային իմաստում ամփոփված ոչ կաղապարված իմաստները: Իմաստաբանությունն, ի տարբերություն գործաբանության, «կենտրոնանում է լեզվական գիտելիքներից բխող իմաստի վրա» [Peccei, 1] և ուսումնասիրում է իմաստներն ու դրանց առանձնահատկությունները, իսկ ավելի ստույգ՝ իմաստաբանությունը բառերի և նախադասությունների իմաստների ուսումնասիրությունն է, այն իմաստների, որ բառերը ձեռք են բերում նախադասությունների մեջ այլ բառերի հետ հարաբերակցելով [Lyons, 1]: Ուստի, բառիմաստի՝ առանց նախադասության և նախադասության՝ առանց բառիմաստի գոյության անհնարինությունը բացատրում է գործաբանության առանց իմաստաբանության և իմաստաբանության առանց գործաբանության գոյություն ունենալու սահմանափակ լինելու փաստը: Այսպիսով, ներակայվող տեղեկատվությունը համարվում է գործաբանության, իսկ արտակա կառույցներում հաղորդվող տեղեկատվությունը՝ իմաստաբանության ուսումնասիրության առարկա [Blakemore, 71], իսկ ներիմաստն առանց արտակա իմաստի և հակառակը՝ հնարավոր չէ: Հետևաբար,

ներիմաստն իմաստաբանության ուսումնասիրության առարկա է դառնում արտակա կառույցների հետ փոխկապակցվածության արդյունքում:

Ներիմաստը դիտարկվում է նաև ոճագիտության շրջանակներում [Арнольд] [Galperin], [Fulton], [Wilson]: Այս դեպքում դիտարկվում են խոսքի իմաստն արտակա և ներակա միջոցներով արտահայտելու և իմաստները բացահայտ կամ տողատակերում կողավորելու ոճերը [Fulton, 60], իսկ ուշադրությունը կենտրոնացվում է խոսքի իմաստաոճային պլանավորման վրա՝ անդրադառնալով դիտավորություններին և մտադրություններին: Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ ներիմաստը ոճագիտության շրջանակներում դիտարկելու համար առավել կարևորվում են մտավոր պատկերացումների գործընթացները, քան լեզվական գիտելիքները:

Որոշ լեզվաբաններ ներիմաստը համարում են թարգմանչական երևույթ՝ այն վերագրելով բառային միավորներին, որոնք մի լեզվում արտակա կառույցներում արտահայտված չեն, բայց մեկ այլ լեզվով վերարտադրելիս արտակայացվում են [Nida & Taber], [Dimitrova]:

Խոսքայնացված (խոսքում արտահայտված) լեզվական միավորների արտակա կառույցների շրջանակներում ներիմաստը՝ որպես տեսանելի նշոյթավորված միավոր գոյություն չունի, սակայն երկխոսության ժամանակ «հնչում է»: Խոսակիցը, խոսքը լսելիս, լսում է նաև ներակայված իմաստները: Ներիմաստի այս հատկանիշը թույլ է տալիս այն բնորոշել որպես «անտեսանելի, սակայն լսելի իմաստ»: Լեզվաբանության մեջ «ներիմաստ» եզրույթին տրվում են նաև այլ պայմանական անվանումներ, ինչպես օրինակ՝ «թաքնված քերականություն» [Բրուտյան, 24], «ենթադրելի, ծածուկ բովանդակություն» [Barak, 105], «բանակցելի իմաստ» [Piazza, 14], «լրացուցիչ մտածական իմաստ» [Арнольд, 84], «թաքնված երկձայն իմաստ» [Вежбицка, 404] և այլն:

Հարկ է նշել, որ ներիմաստը բավական «ընդարձակ կիրառություն» ունի: Այն արտահայտվում է ինչպես բառային, այնպես էլ կառուցվածքային և ասույթային մակարդակներում, որոնք առավել հանգամանալից կդիտարկենք հետագայում:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ լեզվաբանության մեջ ներիմաստի ուսումնասիրությունը ենթադրում է արտակա և ներակա իմաստների ճշգրիտ սահմանազատում: Արտակա կառույցներում արտահայտված տեղեկատվությունը սկսվում և ավարտվում է բառային միավորների վիզուալ գործածմամբ, ուստի ոչ տեսանելի, սակայն ընկալելի ցանկացած բառային միավոր իր բնույթով ներակայված տեղեկատվություն է:

Ներիմաստն ու արտակա իմաստը հիմնականում բնորոշ են հաղորդակցությանը: Արտակա իմաստը բառացիորեն իրականացվում է մակերևութային մակարդակում: Այդ է պատճառը, որ արտակայված տեղեկատվությունը միշտ նույնականացվում է բառերով/բառացի արտաբերված նյութի հետ: Ներիմաստը մակերևութային մակարդակում բառերով արտահայտված չէ, այն արտաքուստ չի երևում տեքստում:

Ա.Բարաքն այն սահմանում է «տողատակերում անտեսանելի թանաքով գրված իմաստ» [Barak, 104], որը, սակայն, հասկանալի է դառնում համատեքստից և հնարավոր է կռահել տեքստի մասնիկներից: Այն ներառում է արտաբերված խոսքին առնչվող ենթադրությունների ամբողջական համակարգ:

Արտակա իմաստը կարելի է համարել *փաստացի տեղեկատվություն*, որտեղ խոսքի բաղադրիչ մասը կազմող բառերը հանդես են գալիս որպես «անհերքելի փաստեր»: Անկախ այն հանգամանքից բառերն ուղղակի իմաստով են գործածված, թե՛ երկրորդական, դրանք կան և վկայում են իրենց իմաստային դաշտում հնարավոր իմաստներից որևէ մեկի առկայության մասին: Ներակա իմաստը փաստ համարել չի կարելի: Այն վերածվում է արտակա կառույցի ենթադրությունների շնորհիվ, իսկ ենթադրելի տարբերակներից յուրաքանչյուրը կարող է հերքվել, քանի որ ներիմաստի ընկալումն ամբողջությամբ հիմնվում է երկխոսության մասնակիցների սուբյեկտիվ ընկալման և սեփական հայեցակետի վրա:

Հատկանշական է, որ ներակա և արտակա իմաստների սահմանազատումը կարելի է վերագրել ներակայման և արտակայացման գործընթացներին: Է.Սթեյնըրը տարբերակում է «արտակա» (explicit) և «արտակայացում» (explicitation) եզրույթները: «Արտակայացումը» ներակա իմաստի վերարտադրման գործընթացն է, մինչդեռ «արտակա իմաստը» առանց վերարտադրման էլ արտաքուստ տեսանելի տեղեկատվությունն է [Steiner, 238]: Նույն սկզբունքով էլ *ներիմաստ* արտաքին կառույցներում չերևացող, սակայն արտահայտված և ընկալվող տեղեկատվությունն է, իսկ *ներակայումը* համարվում է ներիմաստի հաղորդման գործընթաց: Գաղափարական տեսանկյունից դիտարկելիս՝ ներակայված իմաստները կարող են ամբողջությամբ հանդես գալ որպես մակերևութային լրացումներ, քանի որ լեզվին հատուկ շարահյուսական կառույցներն ընձեռում են այդ հնարավորությունը: Ուստի ներակա և արտակա իմաստները կարելի է որակել որպես վիճակ, իսկ ներակայումը և արտակայացումը՝ համապատասխանաբար ներիմաստի հաղորդման և ընկալման գործընթացներ:

Լեզվաբանության մեջ ներիմաստը տեսակավորվում է նախադասության մեջ իր գործառնության բնույթով: Մ.Վարընն առանձնացնում է *ներիմաստ* և *անարտակայություն* (inexplicitness) եզրույթները, հիմնավորելով, որ ներիմաստն արտակա կառույցում որոշ չափով տեսանելի է, իսկ անարտակայության դեպքում «հուշող բառեր» չկան: Նա ներիմաստն օգտագործում է նկարագրելու անուղղակի լեզվօգտագործման ձևերը (indirect language use), ինչպես օրինակ՝ անուղղակի խոսքային ակտերը, որոնք չեն դասակարգվում որպես անարտակայության դեպքեր [Warren, 201]: Այսպիսով, մի կողմից *ներիմաստ* հասկացությունն օգտագործվում է, երբ նկատի ունենք անուղղակիորեն ասվելիք՝ հիմնական տեղեկատվությունը, մյուս կողմից՝ ներիմաստ գործընթացների մոդելները փաստում են, որ ներիմաստը միջոց է «հաղորդելու» հաղորդման ոչ ենթակա՝ հավելյալ տեղեկատվությունը [Roberts, 130]: Մեր կարծիքով այս տարբերակումը նույնացվում է կանխամտածված և ոչ կանխամտածված ներիմաստի

դասակարգման հետ, որտեղ ներիմաստը դիտարկվում է սուբյեկտիվ գործոնի առկայության կամ բացակայության տեսակետից: Սուբյեկտիվ գործոն են համարվում խոսքն արտաբերողի սուբյեկտիվ մտադրություններն ու դիտավորությունները և դրանց ազդեցությունը խոսքի կառուցման գործընթացում:

Անհերքելի է, որ ներիմաստն ու արտակա իմաստը միմյանց լրացնող ձև և բովանդակություն են, արտակա իմաստը՝ ձև, ներիմաստը՝ բովանդակություն [Linell, 54]: Նրանք փոխկապակցված են, քանի որ ներիմաստն անմիջականորեն պայմանավորված է արտակա կառույցի առկայությամբ: Արտակա իմաստն ընդամենը կաղապար է, որն ուղղակի հաղորդակցման՝ երկխոսության ժամանակ բառերի համապատասխան ընտրման, խոսքի ճիշտ շարադրման, խոսքին ճիշտ հնչեղություն տալու դեպքում մասնակցի ծրագրավորած խոսքն ուղղորդում է հասցեատիրոջը, իսկ ընկալողը միայն փորձում է վերակառուցել երկխոսության իրական իմաստների արտաքին պատկերը [Linell]: Հետևաբար, ոչ միշտ է, որ արտակա իմաստը որպես ձև բավական է լինում բովանդակության ճիշտ ընկալման համար: Այն, որպես կաղապար, պետք է դիտարկվի համատեքստում: Համատեքստի և ձևի՝ արտակա կառույցի, համատեղ ուսումնասիրությունն է պատասխանատու ինչպես արտահայտված, այնպես էլ ընկալված իմաստների համար: Այս դիտարկումը թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ ներիմաստը կարող ենք սահմանել որպես լեզվական երևույթ, որը համատեքստի շրջանակներում համալրում է արտակա կառույցը՝ խոսքի իմաստը դարձնելով ամբողջական, սակայն խոսքի իմաստային ամբողջականության բացահայտումը թողնում է ընկալողի հայեցողությանը:

Ներիմաստը նաև դիտվում է որպես ոչ բացահայտ միջոցներով «անձնական իմաստների» ներկայացման միջոց: Այն վերագրվում է իմաստի այնպիսի բնագավառներին, ինչպիսիք են ենթադրվող իմաստները, վերաբերմունքի և հուզականության արդյունք հանդիսացող իմաստները, մեկնաբանությունների համար հիմք հանդիսացող ազդեցությունների հաղորդած իմաստները [Verschueren & Ostman, 140]: Ինչպես արդեն նշվել է, խոսողի հաղորդած իմաստները, որպես անձնական կամ անձնավորված իմաստներ, ծնվում են մտքում: Դրանք նույնացվում են նպատակների և մտադրությունների հետ, որոնց բարձրաձայնումը պայմանավորված է խոսքերի գործածմամբ: Սակայն խոսողն է ընտրում, թե իր մտադրությունները որքանով է հարկավոր խոսքայնացնել՝ վերածել խոսքային մտադրությունների և որ լեզվական մակարդակներում տվյալ խոսքային մտադրություններն իրականացնել:

Կարծում ենք, երկխոսության ընթացքում թե՛ խոսողի, թե՛ խոսակցի կողմից ներակա իմաստներին «հատկացվող ուշադրությունը» որոշակի նպատակներ է հետապնդում: Դրանք են՝

1. Խոսակցի խոսքից առավելագույնը քաղելու ցանկություն:
2. Խոսողի բառերն ի շահ իրեն (խոսակցին) ծառայեցնելով՝ ենթադրելի իմաստներից իր (խոսակցի) համար առավել նախընտրելի տարբերակի վերարտադրումը:

3. Խոսակցի դիրքորոշումները հասկանալու մտադրություն:
4. Թեմայի շրջանակներում խոսողի վերաբերմունքը անձանց, երևույթների կամ իրերի նկատմամբ ճշտելու ցանկություն և այլն:

Այս պարագայում ակնհայտ է, որ անձի գիտակցությունն առաջնորդվում է սեփական նպատակների կարևորման սկզբունքով: Այս պատճառով է, որ ներիմաստի մեկնաբանության ժամանակ խոսակիցն ընկալում է խոսքը, մտովի կառուցում իմաստային բոլոր հնարավոր տարբերակների նախատիպերը, այնուհետև այդ իմաստներից մեկը ներկայացնում է որպես վերջնական տարբերակ:

Եզրակացություն

Երկխոսությունը դիտարկելով որպես ներիմաստակիր հաղորդակցության առավել ցայտուն միջոց՝ կարևոր է ուշադրության կենտրոնում պահել անձի՝ խոսքաստեղծման և խոսքի իմաստավորման հիմքում ընկած մտադրությունները և խոսքի ընկալմանը նպաստող լեզվական և արտալեզվական միջոցները: Կարևոր է նաև նկատել, որ երկխոսությունը դիսկուրսի այնպիսի տեսակ է, որը հնարավորություն է տալիս խոսողին՝ իր խոսքում նկատելով ինքնըստինքյան արտահայտված այնպիսի ներիմաստներ, որոնք փոխում են խոսքի իմաստը՝ հղկել խոսքը և ըստ անհրաժեշտության վերաշարադրել այն: Խոսքարտաբերման առանցքային նպատակ համարելով տեղեկատվության հաղորդման և ձեռք բերման անհրաժեշտությունը՝ ներիմաստի մեկնաբանության ժամանակ կարևորվում են վերոնշյալ նպատակի իրականացման համար մասնակիցների դերն ու խոսքային և ոչ խոսքային ազդեցությունները երկխոսության կառուցման, զարգացման և բացահայտ ու ոչ բացահայտ միջոցներով իմաստավորման հարցում:

Գրականության ցանկ

1. Բրուտյան Լ. «Ներակայման տեսության հիմունքներ», Երևան, «Հայաստան» հրատ., 2002:
2. Barak A. “Purposeful Interpretation in Law”. USA; Princeton University Press, 2011.
3. Bierwisch M. “Semantics”. New Horizons in Linguistics. London: Harmondsworth, 1971.
4. Blakemore D. “Relevance and Linguistic Meaning: The Semantics and Pragmatics of Discourse Markers”. Cambridge: Cambridge University Press, 2002.
5. Brown G., Yule G. “Discourse Analysis”. Cambridge: Cambridge University Press. 1983.
6. Caffi C., Janney R.W. “Toward a Pragmatics of Emotive Communication” // Journal of Pragmatics, 22 (3/4). London: Elsevier, 1994, pp. 325-373.
7. Davis S. “The Distinction between Pragmatics and Semantics” // Verschueren J., Bertuccelli-Papi M. (eds.) The Pragmatic Perspective: Selected Papers from the 1985 International Pragmatics Conference. USA: John Benjamins Publishing, 1987, pp. 685-694.
8. Dimitrova B.E. “Expertise and Explicitation in the Translation Process”. USA: John Benjamins Publishing, 2005.

9. Eco U. “Semantics, Pragmatics and Text Semiotics” // [Verschueren J.](#), [Bertuccelli-Papi M.](#) (eds.) The Pragmatic Perspective: Selected Papers from the 1985 International Pragmatics Conference. USA: John Benjamins Publishing, 1987, pp. 695-714.
10. Fulton G. “Styles of Meaning and Meanings of Style in Richardson’s Clarissa”. Canada: McGill-Queens (MQUP), 1999.
11. Galperin I.R. “Stylistics”. Moscow: Vyssaya Skola, 1977.
12. Gonzalez T. “Implicitness and Ideology” // Rothwell A.D., Guijarro A.J.M., Hernandez J.I.A. (eds.) Talk and Text: Studies on Spoken and Written Discourse. Spain: Univ de Castilla La Mancha, 2000, pp.79-96.
13. Knell S. “A Deflationist Theory of Intentionality” // Stekeler-Weithofer P. (ed.) The Pragmatics of Making it Explicit. USA: John Benjamins Publishing, 2008, pp. 65-82.
14. Levinson S.C. “Pragmatics”. Cambridge: Cambridge University Press, 1983.
15. Linell P. “Approaching Dialogue: Talk, Interaction and Contexts in Dialogical Perspectives”. USA: John Benjamins Publishing Company. 1998.
16. Lyons J. “Semantics”. Cambridge: Cambridge University Press, 1977.
17. Nida E.A., Taber C.R. “The Theory and Practice of Translation”. Leiden: Brill, 1969.
18. Ochs E., Schieffelin B.B. “Acquiring Conversational Competence”. USA: Routledge & Kegan Paul, 1983.
19. Ostman J.O.I. “Pragmatics as Implicitness: an Analysis of Question Particles in Solf Swedish, with Implications for the Study of Passive Clauses and the Language of Persuasion”. USA: University of California, Berkeley, 1986.
20. Peccei J.S. “Pragmatics”. London: Routledge, 2012.
21. Piazza T. “A Priori Knowledge: toward a Phenomenological Explanation”. Berlin: Ontos, 2007.
22. Roberts P. “Implicit Knowledge and Connectionism: What is the Connection?” // Kirsner K., Speelman C., Maybery M., O'Brien-Malone A., Anderson M., MacLeod C. Implicit and Explicit Mental Processes. USA: Psychology Press, 2013, pp. 119-134.
23. Steiner E. “Explicitation: Towards an Empirical and Corpus-based Methodology”. // Webster J. (ed.) Meaning in Context: Implementing Intelligent Applications of Language Studies. UK: Continuum, 2008, pp. 234-277.
24. Verschueren J., Ostman J.O. “Key Notions for Pragmatics”. USA: John Benjamins Publishing, 2009.
25. Warren M. “Features of Naturalness in Conversation”. USA: John Benjamins Publishing, 2006.
26. Wilson P. “Mind the Gap: Ellipsis and Stylistic Variation in Spoken and Written English”. UK: Longman, 2000.
27. Арнольд И.В. “Стилистика современного английского языка”. Ленинград: Просвещение, 1973.
28. Вежбицка А. “Метатекст в тексте”. // НЗЛ., вип. 8, 1981, с. 402-424.
29. Atkinson W.W., Beals E.E. “Subconscious Power on Your Secret Forces”. USA: Cosimo Publishing, 2010, pp. 89.
30. Cmejrkova S. “Emotions in Language and Communication”, in European Science Foundation Journal by Benjamin J. “Emotion in Dialogue Interaction”, 2004, pp. 33-34.
31. “Oxford Dictionary of English”. Oxford: Oxford University Press, 2010.

THE INTERRELATION OF IMPLICIT AND EXPLICIT MEANINGS IN DIALOGUE

Narine Manukyan

PhD in Philology, Associate Professor

YSU, English Chair 2

EUA, Chair of Languages

manukyannarine@ysu.am

Abstract

In this paper, we study the interrelation of implicit and explicit meanings, observe various definitions of the core implicitness of explicit constructions, and turn to the analyses of these linguistic concepts from the point of view of semantics and pragmatics as well. The complex coverage of the notion of implicitness is accompanied by the results and conclusions made by our own research. We also refer to the observations of implicitness in the fields of stylistics and translation.

The paper can be considered theoretical as it is devoted to the analytical nuances of theoretical definitions of implicitness and explicitness and their practical usage.

Implicitness “can’t be seen but can be heard” in explicit structures. On one hand, implied meanings convey an indirectly expressed main message; on the other hand, implicitness is a tool to convey additional information beyond the lines without being repeated.

As dialogue is considered to be one of the means of implied discourse, it is important to pay attention to the intentions of a person in communication and to the linguistic and extralinguistic factors of comprehension as well.

For decoding and analyzing the meaning of intentional implicitness, one should also comprehend the verbal intentions, allusions, subtexts, and voice tone of the speakers.

As for unintentional implicitness, it refers to the common knowledge of the speakers in dialogue on some topic and the skills of making brief but meaningful speech.

Keywords: *implicit meaning, explicit meaning, subtext, intentional implicitness, unintentional implicitness, intent/intention, verbal intention.*

Ներկայացվել է՝ 11.10.2023թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 06.12.2023թ.